Մրցույթ «ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Նորամարգ գյուղի «Ծիածան» մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հոգեբանի (1 դրույքաչափ) թափուր պաշտոնի համար:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենին կամ տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերի բնօրինակները համեմատվում է պատճենների հետ, բնօրինակները՝վերադարձվում:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝

1.թեստավորում

2.հարցազրույց

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 09:00-17:00, բացի շաբաթ,կիրակի և տոնական օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է ՝ 11.01.2024թ-07.02.2024թ ներառյալ:

Մրցույթը տեղի կունենա՝ 09.02.2024թ, ժամը 15:00-ին:

Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնք գ. Նորամարգ 17 փողոց, շ. 35

Հեռ. +37493954642

Էլ.փոստ noramargm@mail.ru